

Ո. ՀԵՆՐԻ

ԿԱՐՄՐԱՄՈՐԹՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ



ՊԵՏՂԱՏ

1940

Tot 2, 1/2 M.

Yucca filamentosa
1938

1939
1940
1941

904

Ո. ՇԵՆՐԻ

ՀԱՅԿԵՆՏ 1987 թ.

ԿԱՐՄՐԱՄՈՐԹ ՆԵՐԻ ԱՌԱՋ ՆՈՐԴԸ

Նկարներ՝ Ֆ. ՊՈՒՆԵՉՈՒԿԻ

Ռուս. քարգումեց՝ Ս. ՍՈՏՆԻԿՅԱՆ

հՏԻՇ 23754
1940-11-07-81




ՄԵՏՉՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԿՈՍՏԱՆՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵԿԱՆ 1988



THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY



Ո. Հ Ե Ն Ր Ի

(1862—1910)

Հնարելու զարմանալի ձիրք ուներ նա: Մի անգամ իր փոքրիկ աղջկան գրել էր. «Հիշում ես դու ինձ: Յես Մուր-գիլկան եմ, իմ անունս է Ալլիբիրոնտիֆոստիֆոռնիկոֆու-կոս: Յեթե դու յերկնքում ասող տեսնես և նախքան նրա մարելը կորոզանաս տամյոթ անգամ կրկնել անունս, դու կապույտ կովի հենց առաջին հետքի մեջ ազամանդե մի մատանի կգանես: Կովը ձյունի վրա կքալի — փոթոր-կից հետո — իսկ շուրջը պոմիդորի թփերի վրա ալ վարդեր կծաղկեն: Դե, մնաս բարև, ժամանակն է մեկնելու: Յես գնում եմ ծղրիդ հեծած»:

Յերևակայական եյին թե կապույտ կովը և թե պոմիդորի թփի վրալի ալ վարդերը, բայց ավելի շատ անբնականն այն պարզ նախադասության մեջ յեղած հե-տեվյալ բառերն եյին՝ «ժամանակ» և «մեկնելու», վորով-հետև այդ նամակը Ո. Հենրին գրել և տաժանակիր բան-տուծ յեղած ժամանակ: Իր կյանքի այն մի քանի տարի-ները, վոր անց էր կացրել նա բանտարկալի շեր-տավոր հազուստների մեջ պատճառ յեղան, վոր Ո. Հեն-րին հոշակավոր գրող դառնալով, այնուհետև ամեն կերպ թաղցնի իր անցյալը: Այն կարճ մականունը, վոր ընտ-րել էր, պակաս խորհրդավոր չէր թվում, քան քսան-ութ տառից բաղկացած Մուրգիլիկի անունը:

Միայն Ո. Հենրիի մահից հետո բացվեցին նրա կենսագրութեան մի քանի մանրամասնությունները: Ո. Հենրիի իսկական անունը Վիլյամ Պորտեր եր: նա ծնվել է Ամերիկայի մի խուլ քաղաքում, բժշկի աղքատ ընտանիքում: Նրա հայրը տարված էր ինչ-վոր Փանտաստիկ մեքենաների ապարդյուն գյուտարարութեամբ: Հեռավոր ճանապարհորդությունների և նշանավոր արկածների յերազանքը դեռ փոքր հասակից գերել էր Վիլյամին: Տաս տարեկան հասակում կետորսութեանը նվիրվելու հաստատուն վճռով նա անից փախավ: Նրան վերադարձրին: Յեզ շուտով Վիլյամը ստիպված պիտի գնար մարդկանց մեջ մտներ, վոր սովորական արհեստով իր համար հաց ճարեր:

Սկսվեց ծանր պաշարի ժամանակն ապրուստի համար: Իր ժամանակակից Ջեկ Լոնդոնի նման Պորտերը փորձեց ամեն տեսակ արհեստներ: Սկզբում գեղատանն էր աշխատում իրըն աշակերտ. ավելի ուշ, ֆերմայում վորպես կովբոյ*) էր աշխատում, գրասենյակումն էր ծառայում, դժագրիչ էր, դերասան, լրագրավճառ, բանկալին գանձապահ: Վերջին պաշտոնը ճակատագրական դարձավ Պորտերի համար: Բանկում գեղձարարություն բացվեց և այդ բանի մեջ անհիմն կերպով մեղադրեցին Պորտերին: Նա փախավ Հարավային Ամերիկա: Յերկար ժամանակ թափառական կյանք էր վարում այնտեղ. չեղավ Արգենտինայում և Պերույում, Գոնդուրասում և Մեքսիկայում, բայց կնոջ հիվանդութեան լուրը լսելով, վերադարձավ հայրենիք: Նրան տաժանակիր բանտարկութեան դատապարտեցին— հինգ տարի անտանելի դրկանքների և անորինակ անարգանքների: «Այստեղ թորախտն ու ինքնասպանությունը նույնպես հաճախակի չեն, ինչպես հարբուխն ու պիկնիկը ձեզ մոտ, աղատութեան մեջ», գրում էր Պորտերը բանալից: Այստեղ փաթաթաթղթի կտորատանքի վրա գրեց իր առաջին

*) Կովբոյ— ձիավոր հովիվ:

պատմվածքը: Այդ պատմվածքը չտպեցին, սակայն քառասուն տարեկան Պորտերը դուրս յեկավ բանտից, հաստատ համոզված լինելով, վաղ իր միակ կոչումը գրականութունն է:

Իր կյանքի մնացած վոչ լրիվ տաս տարվա ընթացքում Ո. Հենրին գրեց յերեք հարյուր նորավեպ — կարճ ու գրավիչ պատմվածքներ: Ամեն մի պատմվածքի մեջ նա դնում էր իր արտասովոր ու ծանր կյանքի ընթացքում կուտակված բազմակողմանի գիտելիքները մի վոքը մասը:

Մի գրող, վոր գիտեր դեղահատեր փաթաթել և լաստ*) նետել, լրագրեր հարթել, թամբի վրա նստած հրացան արձակել, մի մարդ, վորն Ամերիկայի մայր ցամաքի ամենահեռավոր անկյուններն էր թափառել և ուշադրությամբ դիտել կյանքը գավառական քաղաքներում և Ֆերմաներում, նավահանգստներում և պլանտացիաներում, տափաստաններում և մայրաքաղաքներում, ակումբներում և բանտերում, — նա նոր հերոսներ տվեց գրականությանը, և պատմեց նրանց մասին նոր լեզվով՝ հակիրճ, արտահայտիչ, առը ու ծաղրող:

«Ամբողջ կյանքն ինձ է պատկանում: Յես քաղում եմ նրանից այն, ինչ ուղում եմ և կիրադորժեմ այնպես, ինչպես կարողանում եմ», այսպես էր գրում Ո. Հենրին իր գրքերից մեկում: Յեվ այդ նա կատարում էր այն արվեստով, վորը թափառական, պատահական արվեստների տեր մարդուն Ամերիկայի առաջին նորավեպ գրողի տեղը նվաճեց:

Ա. ՌՈՍԿԻՆ

*) Լաստ — ողապարան:



ԿԱՐՄՐԱՄՈՐԹՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Այդ կարծես նման եր մի շահավետ գործի... Սակալն, համբերեցեք—թողեք խոսքս վերջացնեմ:

— Մենք գտնվում ելինք այնտեղ, հարավում, Ալաբամայում, լերը մանկագողության այդ գաղափարը մտավ մեր գլուխը: Այդ պատահեց, ինչպես Բիլլ Դրիսկոլլն եր հետագայում արտահայտվում, այն մոմենտին, լերը մեր միաքը ժամանակավորապես պղտորվեց: Սակալն այդ բանը հետո միայն պարզվեց:

Այդպես ուրեմն, այնտեղ մի փոքրիկ քաղաք կար, ապակի, ինչպես մի բլիթ, և վորը կոչվում եր, իհարկե, վոշ ալլ կերպ, բայց լեթե Սեմմիտ*):

Յես և Բիլլը միասին ունեկինք մոտ վեց հարյուր գոլլար, իսկ մեզ անհրաժեշտ եր ունենալ ելի մի լերկու հագար, վոր մի խարդախ գործ սկսելինք Արևմտյան Իլլինոյսում: Այդ գործը մենք լավ կշռադատեցինք՝ նստած հյուրանոցի սանդղավանդի վրա: Այդպիսի կիսաքաղաք-կիսագյուղերում սերը դեպի իրենց զավակները հավանորեն առանձնապես ուժեղ պիտի լինի, դատում ելինք մենք: Ահա թե ինչու, և ելի այլ պատճառներով, ման-

*) Սեմմիտ—գազաթ, բարձունք:

կազողութեան նախագիծը իրագործելն այստեղ հազար անգամ ավելի խելքի մոտ բան եր, քան այն սահմաններում, ուր հասնում են թերթերը, վորոնք անմիջապես պատահարի վայրն են ուղարկում քաղաքացիական հագուստով իրենց լրահավաքներին: Իսկ Սեմմիտը, մենք գիտեցինք, վոր վոչ մի այլ սարսափելի բան չի կարող ուղարկել մեր դեմ, բաց չեթե մի զուլգ կոնստերլներ*) և գուցե ելի մի քանի անպետք խուզարկու շուն և մի զուլգ հայնուական հողված «Ֆերմերական շարթաթաթերթի» մեջ: Մի խոսքով, ըստ լերևույթին, ամեն ինչ բարեհաջող եր գասավորվում:

Իբրև զո՛ մեզ համար նշել էյինք հայտնի քաղաքացի վոմն Երենեգեր Դորսետի միակ վորդուն: Հայրն այդ քաղաքի պատվավոր վաշխառու սարգն եր և սկզբունքով հակառակ եր ամեն տեսակ հանգանակութունների և նվիրատվութունների:

Տղան տաս տարեկան եր: Նրա դեմքի վրա պեպեններից փոսեր էին լերեվում, իսկ մազերի գուլնը նման եր այն ամսագրի շապիկին, վոր գնում եք կաշարանի կիտակի մոտով անցնելիս, յերբ շտապում եք թոչել գնացքը:

Մենք Բիլլի հետ վորոշեցինք, վոր Երենեգերը շարդ ու փշուր կլինի, բաց ստիպված յերկու հազար դոլար մինչև վերջին կոպեկը կհաշվի իր վորդու համար: Սակայն, համբերեցեք, թողեք մինչև վերջը պատմեմ:

Այդ քաղաքից յերկու մղոն հեռավորութեան վրա յեղեմնու թփուտով ծածկված մի սար կար: Այդ սարի մեջ հակառակ կողմից մի քարայր կար: Ահա այդ քարայրի մեջ մենք մթերքի պաշար պատրաստեցինք:

Մի պեղեցիկ զիշեր Երենեգեր Դորսետի տան մոտ կանգնեցրինք մեր միաձի կառքը: Տղան փողոցում թա-

*) կոնստերլ—վոստիկան:

փառում եր և քարեր նետում դիմացի ցանկապատին նստած կատվի վրա:

— Ե՛յ, փոքրիկ,—ասաց Բիլլը—Կուզե՞ս կառքով զբոսնել և մի տուպրակ սառնաշաքար ստանալ:

Տղան քիչ եր մտում Բիլլի աչքին նետեր աղյուսի կտորը:

— Այդ մի հինգ հարյուր դոլլարով ալել կնստի ծերուկին,—ասաց Բիլլը և կառքից դուրս լեկավ:

Տղան թպրտում եր ինչպես մի թավշյա առջուկ: Հագիվ մեզ հաջողվեց պեղ նրան կառքի հատակին և մենք քշեցինք: Տղային տարանք քարայր, իսկ ձին լեղեվնու թփուտի մեջ կապեցինք: Կառքը յես վերադարձրի յերեք մղոնի վրա գանվող հարևան գյուղը, վորտեղ մենք վարձել ելինք այն, և այնտեղից վոտքով վերադարձա:

Բիլլը սպեղանու կտորներ եր կպցնում իր մարմնի ճանկրած ու կապտած տեղերին: Քարայրի մուտքը փակող մեծ քարի հետեը խարույկ եր վառվում: Տղան, մորաճուռակի*) պոչից պոկած յերկու փետուր ցցած իր շիկակարմիր գանգուլների մեջ, հետևում եր խարույկի վրա կախված թեյամանին: Յերք յես մոտեցա, նա ցույց տվեց իր կողքին դրած մահակը և ասաց.

— Անիծված սպիտակամորթ: Ինչպես ես համարձակվում մոտենալ հովիտների սարսափ կարմրամորթների առաջնորդի խարույկին:

— Վերջապես հանդարտվեց,—ասաց Բիլլը և վոյորելով վարտիքը նայում եր իր վոտքերի վրա գոյացած արյան լճացումներին:—Մենք հնդկացիներ ելինք խաղում: Յես ծեր գազանորսն եմ և գերի յեմ ընկել կարմրամորթների առաջնորդի մոտ: Լուսաբացին գանդամաշկս պիտի քերթեն: Սատանան տանի: Այս տղան կարգին աքացի յե խփում: Այո, սեր, տղան իրեն շատ լավ եր դգտում, կարծես թե յուղ ու մեղրի մեջ եր լվվում: Այնքան

*) Մորաճուռակ—բազեյի նման մի թռչուն:

հետաքրքիր եր նրա համար քարայրում խարույկի մոտ գիշերելը, վոր բուրո՞ւմին մոռացավ, թե ինքը գերի յե։ Անմիջապես անուն հնարեց ինձ համար—Ոձի Աչք, լրտես հայտարարեց ինձ և դատապարտեց մահվան՝ խարույկի դանդաղ կրակի վրա խորովելով։ Մահապատիժը պիտի կատարվեր լուսաբացին, յերբ արշավից կվերադառնային նրա քաջարի մարտիկները։

Մենք նստեցինք ընթրելու։ Տղան հացով ու ապուխտով լցրեց բերանը և սկսեց խոսել։ Նա մի յերկար ճառարտասանեց, մոտավորապես այսպիսին.

— Այս լավ բան և։ Յես դեռ յերբեք խարույկի մոտ չեմ գիշերել։ Բայց յես առաջ մի ձեռնասուն պառկամուկ ունեյի—մհ, վորքան ծիծաղելի յեր նա։ Յես տաս տարեկան եմ դառնում։ Տանել չեմ կարողանում դպրոց հաճախելը։ Մկները կերան Ձիմմի Տալբոտի չալ հավի տասնվեց ձուն։ Այստեղ անտառում իսկական հնդկացիներ լինում են։ Ելի ապուխտ տվեք ինձ։ Ճիշտ և, վոր քամին ծառերի շարժումից ե առաջանում։ Մենք հինգ հատ շուն ունեյինք։ Գազաննրս, քիթի ինչո՞ւ այդքան կարմիր ե։ Հայրիկս մի կույս դրամ ունի... Աստղերը տաք են։ Յես նրան շաքաթ որը մի լավ ձեծեցի, եդ Ուոկերին։ Չեմ սիրում աղջիկներին... Գողոշները պետք ե պարանով վորսալ. ձեռքերով չի կարելի։ Յեգներն ել են բառանչում։ Վո՞չ, Ինչո՞ւ նաբինը կլոր ե։ Այստեղ քարայրում դուք մահճակալներ ունեք։ Ամոս Մուրեյին վեց մատ ունի. ձիշտ եմ տաում... Թութակը խոսել գիտե, իսկ կապիկը կամ ձուկը չգիտեն... Ուրեմն, քանի՞ միավոր կա դյուժինի մեջ։

Ամեն մի հինգ բոպեյից հետո նա հիշում եր, վոր ինքն արջունարբու հնդկացի յե, վերցնում եր իր փայտը, վոր հրացան եր պատկերացնում, և մասների ծայրերի վրա քարայրի մուտքի կողմն եր ուղեվորվում, վոր հսկի, արդյոք չեն գալիս ատելի սպիտակամորթների հետախույզ-

ները: Ժամանակ առ ժամանակ նա մարտական ճիչ էր արձակում, վորից ծեր Գազանորսը ցնցվում էր:

Հենց սկզբից տղան խուճապի մեջ էր զցել Բիլլին:

— Կարմրամորթների առաջնորդ, — ասացի, — կուզե՞ս տուն վերադառնալ:

— Ինչո՞ւ համար, — պատասխանեց տղան, — տանը՞ տը-
խուր ե: Ձեմ սիրում դպրոց գնալ: Այսպես ավելի ուրախ ե —
խարույկի մոտ գիշերելը: Ոձի Աչք, դու ուզում ես ինձ
տուն տանել: Ե՛, հարկավոր չե:

— Լավ, — ասացի, — մենք կմնանք դեռ այստեղ, քարայ-
րում:

— Ո՞ն, այդ հրաշալի յե, — ասում ե տղան: Մքանչե-
լի յե: Կյանքումս դեռ այսպես չեմ ուրախացել:

Ժամը տանսեկին մոտ պառկեցինք քնելու: Մի
քանի վերմակ փոսեցինք և կարմրամորթների առաջնոր-
դին մեր մեջտեղը պառկեցրինք:

Մենք չեյինք վախենում, թե նա կփախչի: Ուղիղ յե-
րեք ժամ չթողեց մեզ վոր քնենք: Ամեն քատորդ ժամը
մեկ նա վեր էր թռչում, վերցնում էր հրացանը և ճչում
իմ կամ Բիլլի ականջին. «Ս-ս-ս, ընկեր»: Հենց վոր մի
տեղ ճյուղը ճթթար, կամ տերևը խշշար, — նա վեր էր
թռչում: Վերջը յես քնեցի, բայց անհանդիստ քնով, և
յերագում տեսա, իբր թե մի շիկակարմիր ավազակ փախ-
ցրել ե ինձ և շղթալով ծառից կապել:

Լուսաբացին Բիլլի սոսկալի ճչոցից յես արթնացա:
Դա ճչոց չեր, և վոչ ել բացականչութուն, կամ աղաղակ,
կամ փոռոց, կամ մի նման բան, վոր փոքր ի շատ ե
վայել լիներ տղամարդու ձայնաթելերին: Դա մի անպար-
կեշտ, խուճապալին և ստորացուցիչ ճչոց էր մի կնոջ,
վոր տեսիլք էր տեսել կամ հագարոտնանի: Սոսկալի բան

և լուսաբացին, քարայրում լսել առողջ, կատաղի և ուժեղ մի մարդու կանացի ճչոցը:

Վեր թռա, վոր տեանեմ, թե ինչ ե պատահել: Կարմրամորթների առաջնորդը Բիլլին հեծած, մի ձեռքը խրել եր նրա գանգուրների մեջ, մյուսով սուր դանակ բռնած. այն դանակը, վորով մենք ապուխտն եյինք կտրտում: Տղան նախորդ որը հայտարարած դատավճռի համաձայն, պատրաստվում եր Բիլլի գանգամաշկը պոկել:

Դանակը խլեցի՝ նրա ձեռքից և նորից պառկեցրի: Քայց այդ բոպեյից արդեն Բիլլի հավասարակշռությունը խանգարվեց: Նա պառկած եր իր տեղում, բայց քանի դեռ տղան մեր լերկուսի մեջտեղումն եր պառկած, Բիլլը աչք չեր փակում: Յես մի քիչ ննջեցի:

Լուսաբացին մոտ հանկարծ հիշեցի, վոր կարմրամորթների առաջնորդն ինձ մեղմ կրակի վրա այրման եր դատապարտել և վոր մահապատիժը պիտի լուսաբացին կատարվեր: Յես չեյի ջղայնանում և վոչ ել վախենում եյի, սակայն վեր կացա ծխամորճս կպցրի և պատին հենվեցի:

— Ինչո՞ւ այդքան շուտ ես վեր կացել, Սեմ, — հարցրեց ինձ Բիլլը:

— Չգիտեմ իսկապես, — ասացի. — թիկունքս ինչ վոր ցավում ե: Կարծում եմ, վոր ավելի թեթե ինձ կզգամ, յեթե նստած մնամ:

— Ստո՞ւմ ես, — ասաց Բիլլը: — Դու վախենում ես: Խարույկի վրա այրվելուն ես դատապարտված և վախենում ես, թե տղան իրագործելու յե իր դատավճիռը: Յեմ նա կաներ այդ, յեթե միայն հաջողվեր նրան լուցկի գտնել: Ի՞նչ սարսափելի բան ե, Սեմ: Մի՞թե վորեւ մեկը կհամաձայնվի դրամ վճարել, վոր հետ տան նրան այս սատանային:

— Պարզ բան ե, — ասացի. — սրա նման տղան ամենափրալինն ե լինում սիրուց դողացող ծնողների համար: Դե,

ապա մի վեր կացեք առաջնորդի հետ միասին և նախա-
ճառով զբաղվեցեք, իսկ յես վերև կբարձրանամ: Այնուա-
մենայնիվ անհրաժեշտ ե տեղադննություն կատարել:

Բարձրացա մեր փոքր սարի գագաթը, շրջակայքը
դիտեցի: Յես սպասում եյի, թե կտեսնեմ Սեմմիտի կողմից
դուրս յեկած մանգաղներով ու յեղաններով զինված հաղ-
թանդամ գյուղացիների մի խումբ, վորը պիտի վորոններ
ստոր մանկագողերին: Սակայն, խաղաղ տեսարան բաց-
վեց առաջ. և այդ անմարդավայր շրջապատի վրա
կետի նման սեվին եր տալիս մի մարդ, վոր քայլում եր
մուգ շագանակագուն շորի լծած գութանի հետևից: Գետում
վոչ վոր կարթ չեք նետել: Սուրհանդակներ չեյին սլանում
այս ուայն կողմանմխիթար ծնողներին տեղեկություն հասց-
նելու համար: Ալբբամի հարթության այն փոքրիկ կտորը,
վոր բացվում եր աչքերիս առաջ, գյուղական քնկոտ խա-
ղաղությամբ եր շնչում: «Մի գուցե,—մտածեցի յես,—
այնտեղ դեռ գլխի չեն ընկել, չդիտեն, վոր չար գայլերը
խաղաղ հարկի տակից փախցրել են անմեղ գառնուկին»:

— Տեր, ոգնիք գայլերին,—ասացի և իջա քարայր
նախաճաշելու:

Յերբ մոտեցա քարայրին, տեսա Բիլլը կուչ ե յեկել
և մեջքը քարե պատին ե հենել: Նա ծանր շնչում եր:
Տղան կանգնած եր Բիլլի առաջ և սպառնում եր կես
հողընկուղի չափ քար նետել նրա գլխին:

— Տաք կարտոֆիլ դցեց ոճիքիս մեջ,—բացատրեց
Բիլլը,— և այն վտաքով ճխեց ինձ վրա: Յես նրա ական-
ջին մի ապտակ հասցրի: Սեմ, ատրճանակ ունե՞ս:

Տղալից քարը խլեցի և մի կերպ հաշտեցրի նրանց:

— Դու դեռ քոնը կստանաս,—ասաց տղան Բիլլին:—

Վոչ վոր դեռ չի համարձակվել ձեռք տալ կարծրամորթ-
ների առաջնորդին: Զգուշացի՛ր:

Նախաճաշից հետո տղան զբաղանից կաշվի մի կտոր



Կարմրամորթների առաջնորդը հեծել եր ՌԻԱԼՆ՝

հանեց, վորի վրա թեւեր եյին փաթաթած, և հետ տալով
այն դուրս գնաց քարալից:

— Ել ի՞նչ ե ուզում անել, — անհանգստացած ասաց
Բիւլը: — Մեմ, չես կարծում արդո՞ք, վոր նա պատրաստ-
վում ե փախչել:

— Մի վախենար, — ասացի. — նա ըստ յերեվույթին
մեծ անասեր չէ: Սակայն մեզ անհրաժեշտ ե այդ փրկա-
գնին վերաբերող մի ծրագիր կազմել: Ըստ յերեվույթին
նրա անհայտացումն առանձին տագնապ չի առաջացրել:
Գուցե դեռ չգիտեն, թե նա կորել ե: Ծնողները կարող են
կարծել, թե վորեմե մորաքույր Ջենի կամ հարեմանների
մոտ ե գիշերել: Համենայն դեպս, ցերեկը կբացվի նրա
անհայտացումը: Մենք յերեկոյան դեմ հայտարարութուն
պիտի հասցնենք նրա հորը. վոր տղան մեզ մոտ ե գըտ-
նըվում, և վոր նրան վերադարձնելու համար մենք ցան-
կանում ենք յերկու հազար ստանալ:

Հենց այդ ըոպելին մարտական մի աղաղակ լսեցինք.
Նման այն աղաղակին, վոր արձակել եր Դավիդը*), յերբ
նա գլխովին շարճեց հայտնի ըմբշավարպետ Գովաֆին:
Այն իբր, վոր կարմրամորթների առաջնորդը հանեց իր
գրպանից, հենց պարսատիկն եր: Նա թափահարում եր այն
գլխի վերեվում:

Յեռ մի կողմ թեքվեցի և լսեցի ուժեղ հարվածի ձայնը
ու Բիւլի ծանր հառաչանքը, վոր նման եր ձիու հառաչանքի,
յերբ նրանից վերցնում եք թամբը: Հավիթի չափ մի
քար կպել եր Բիւլի ձախ ականջի հետեւը: Նա ձեռքերն
իրար զարկեց և ընկավ ուղղակի խարուչիկ մեջ դրված
կաթսայի վրա, վորով աման լվանալու ջուր եր տաքանում:

Ստիպված ելի դուրս քաշել նրան այնտեղից և մոտ
կես ժամ սառը ջուր եյի ցանում նրա վրա:

*) Դավիդ — հրեական թագավոր, վորը համաձայն աստվա-
ծաշնչի ավանդության, պարսատիկից քարով սպանեց հսկա Դո-
վաֆին:

Բիլլը կամաց-կամաց ուշքի յեկավ, նստեց ու շոշափեց իր ձախ ականջի հետեւը:

— Սեմ, — ասաց նա. — գիտե՞ս, ով ե բերլիալի մեջ իմ սիրելի հերոսը:

— Հանգստացիր, — ասացի. — իսկուհն կառողջանաս:

— Հերովդես թագավորը*), — շարունակեց նա: Սեմ, դու չե՞ս հեռանա: Ինձ մենակ չե՞ս թողնի:

Յես բռնեցի տղային ու թափահարեցի: Այնքան թափահարեցի, մինչև վոր նրա պեպենները թրթոացին ինչպես սիսեռը սկյուտեղի վրա:

— Յեթե դու քեզ կարգին չես պահի, — ասացի, — անմիջապես տուն կտանես: Մարդավարի կպահե՞ս քեզ, թե վոչ:

— Չե՞ վոր յես խաղում ելի, — ասաց տղան նեղացած: — Յես խփել չելի ուզում Գազանորսին: Իսկ ինչո՞ւ առաջ նա ինձ խփեց: Լսիր, Ոձի Աչք, յես ինձ լավ կզահեմ: Միայն թե ինձ տուն մի ուղարկի և թույլ տուր ինձ, վոր հետախույզ խաղամ:

— Չգիտեմ այդ ինչ խաղ ե, — պատասխանեցի յես: — Այդ միտտեր Բիլլի հետ միասին կվորոշեք: Այսօր նա քո խաղընկերը կլինի: Յես գործով մի տեղ պիտի գնամ: Դե, այժմ բարեհաճիր անմիջապես մոտենալ նրան, ներողություն խնդրել և հաշտվել նրա հետ: Ապա թե վոչ, անմիջապես մարջ դեպի տուն:

Ստիպեցի նրան և Բիլլին իրար ձեռք սեղմել: Այնուհետև Բիլլին մի կողմ քաշեցի և ասացի, վոր յես գընում եմ Պոպլար-կոֆ — փոքրիկ գյուղը, — մեր քարայրից յերեք մղոն հեռավորության վրա և այնտեղ կտեղեկանամ,

*) Հերովդես թագավորը — Պաղեստինի կառավարիչ: Ինչպես ասում ե աստվածաշնչի ավանդութունը, լսելով, վոր Յերուսաղ. մում ծնվել ե «հրեական թագավորը» (Քրիստոս), նա հրամայեց մի գիշերվա մեջ վոչնչացնել քաղաքի բոլոր նորածին տղա զավակներին:

Թե Սեմմիտում ինչպես են վերաբերվել տղան փախցնելուն: Յենթադրում էյի նույնպես, վոր նպատակահարմար կլիներ նախորոք մի նամակ ուղարկել ծեր Դորսեաին, փրկագին պահանջելով նրանից և նշելով, թե ինչ ձեվով պիտի վճարի այն:

— Սեմ, քեզ հայտնի չե,—ասաց Բիլլը,—վոր յես հետ չեմ մնացել քեզնից և աչք չեմ թարթել վոչ լերկրաշարժի ժամանակ, վոչ կրակում, վոչ ջրում: Պոկերը*), դինամիտի պայթյունները, վոստիկանների խուզարկությունները, գնացքների թալանումը և ցիկլոնները չեն կարողացել բաժանել մեզ իրարից: Յես չգիտեյի, թե ի՞նչ բան է վախը մինչև անիծված այն ուրը, լերը փախցրինք այս սատանի ճուտին, այդ լերկոտանի հրթիռին, սատանան քրքրի նրան: Նա իմ մեջ խուճապ առաջացրեց: Սեմ, դու ինձ յերկար ժամանակով նրա հետ մենակ չեմ թողնի:

— Յերեկոյան դեմ կվերագառնամ,—ասացի:—Զվարճացրու նրան մի կերպ և զբաղեցրու մինչև վերագարծս: Դե, իսկ այժմ, լեկ մի նամակ շարադրենք ծեր Դորսեաին:

Մատիա և թուղթ ճարեցինք և սկսեցինք շարադրել նամակը: Կարմրամորթների առաջնորդը վերմակի մեջ փաթաթված քայլում եր քարայրի առաջ, պաշտպանելով նրա մուտքը: Բիլլն արտասուքն աչքերին աղաչում եր ինձ իջեցնել աղայի փրկագնի դուռը մինչև մեկ ու կես հազար դոլլար յերկու հազարի փոխարեն:

— Յես փորձ չեմ անում,—ասում եր նա,—նվագեցնել հայրական սիրո և նվիրվածության բարձր զգացմունքը սակայն չե՞ վոր մենք մարդկանց հետ գործ ունենք: Մարդը միմիայն մարդ է և վոչ ավելին: Բայց դե չի կարելի պահանջել մարդուց, վոր նա յերկու հազար դոլլար դեն ձգի քառասուն ֆունտ կշիռ ունեցող պեպենոտ վայրի կատվի համար: Այդ հակառակ է մարդու բնությանը:

*) Պոկեր—մոլեգին թղթախաղ:

Մեկ ու կես հազարի ոխակ ելի կարելի յե անել: Տարբերութունը յես իմ հաշվիս կվերցնեմ:

Յես ստիպված չեղա գիշել, վոր հանգստացնեմ Բիլլին, և մենք կազմեցինք հետեվյալ նամակը.

«Նսկվայր*) Երեմեգեր Գորսեսիմ

Մենք թագցրել ենք ձեր վորդուն մի տեղ, հեռու Սեմմիտից: Ամենալավ խուզարկուներն անգամ ձեզ չեն ոգնի: Միակ և վերջնական պայմանը, վորով դուք կարող եք հետ ստանալ ձեր վորդուն, հետեվյալն ե: Նրան ձեզ վերադարձնելու համար մենք պահանջում ենք հազար հինգ հարյուր զոլլար խոշոր կտրոններով: Դրան այսօր կես գիշերին պիտի թողնվի նույն տեղում, վորտեղ մենք կգտնենք այս նամակի ձեր պատասխանը. տեղի նկարագրութունը ներքև տրված ե: Յեթե դուք համաձայն եք մեր պայմանին, այսօր ութն անց կես ժամին ուղարկեցեք պատասխանը: Յերբ կանցնեք Բոււի գետակը Պոպլար-կոֆի ճանապարհին, այնտեղ յերեք բարձր ծառ կտեսնեք, իրարից հարյուր յարդ**) հեռավորության վրա, հենց ցանկապատի մոտ, վորը շրջապատում ե վարելահողն աջ թեվի վրա: Յերրորդ ծառի գիմաց, գետինն, ցանկապատի սյունի մոտ, ձեր կողմից ուղարկված մարդը փոքրիկ կարտոնատուփ կգտնի:

Նա պիտի դնի այդ տուփի մեջ ձեր պատասխանը և անմիջապես վերադառնա Սեմմիտ:

Յեթե դուք մտածեք վորևե ստորություն անել կամ չհամաձայնեք մեր պայմանին, այլևս դուք յերբեք չեք տեսնի ձեր վորդուն:

*) Նսկվայր—Ամերիկայում և Անգլիայում հողատերերի և կալվածատերերի տիտղոս:

**) Յարդ—Անգլիայում և Հյուս. Ամերիկայում ընդունված չափ ե, վորը հավասար ե 3 փոտնաչափի:



Իսկ յեթե վճարեք դրամը, ինչպես ցույց ե տված,
յերեք ժամից հետո ձեր վորդին կվերագարձվի ձեզ
առողջ և անվնաս:

Այս պայմանը վերջնական ե, և յեթե ուրեք չհա-
մաձայնեք այդ պայմանին, վոչ մի տեղեկութիւն մեզ-
նից այլևս չեք ստանա:

Գլխից ձեռք վեցրած յերկու մարդ»

Դորսեաի հասցին գրեցի և նամակը գրպանս դրի:
Յերբ յես արդեն պատրաստվում եյի մեկնել, տղան մո-
տենում ե ինձ և ասում.

— Լսիր, Ոձի աչք, դու ասացիր, վոր ինձ կարելի չե
հետախույզ խաղալ մինչև դու վերադառնաս:

— Խաղա, իհարկե, — ասում եմ: — Միտտեր Բիլլն ել
կխաղա քեզ հետ: Վո՞րն ե այդ խաղը:

— Յես հետախույզ եմ — ասում ե կարմրամորթների
առաջնորդը, — և յես պիտի նախազգուշացնեմ նորաբնակ-
ներին, վոր հնդկացիները պատրաստվում են հարձակում
գործել նրանց վրա: Յես ձանձրացել եմ ինքս հնդկացի
լինելուց: Ուզում եմ հետախույզ լինել:

— Հրաշալի յե, — ասացի, — ըստ յերեվույթին դա ան-
մեղ խաղ ե: Յես կարծում եմ միտտեր Բիլլը կոգնի քեզ
այդ արյունարբու վայրենիների քիթը արորել:

— Իսկ յես ի՞նչ պիտի անեմ, — հարցնում ե Բիլլը ու
կասկածոտ նայում տղային:

— Դու ձի յես, — ասում ե հետախույզը: Չարեքթաթ
կանգնիր: Յես քեզ հեծած կղնամ նորաբնակներին ճամ-
բարը: Չի վոր չունենամ, ի՞նչ հեծնեմ:

— Հարկավոր ե առայժմ գրադեցնել նրան, — ասում եմ
Բիլլին: Մի վիճիր հետը:

Բիլլը կանգնում ե չորեքթաթ:

Հանկարծ նրա աչքերում բռնկում ե մի արտահայտու-



Սկսեցինք շարունակ համակը:

թյուն, վոր ունենում ե ճագարը, յերբ նրա վրա յե ընկնում թակարդը:

— Հեռու յե գտնվում այդ նորաքնակների գումակը, — հարցնում ե նա:

— Իննսուն մղոն, — ասում ե հետախույզը: — Դու ստիպված կլինես ճիգ թափել, վոր ժամանակին հասնես: Դե, հոպ, գնա:

Հետախույզը թռչում ե Բիլլի վրա ու նրա կողքերն ե խրում իր կրունկները:

Հանուն բոլոր սրբությունների, — ասում ե Բիլլը, — վորքան կարելի յե շուտ վերադարձիր, Սեմ: Ախ, իդուր մենք փրկագինը հագար հինգհարյուր նշանակեցինք: Հագար պիտի ուզեյինք: Լսում ես, կղաղարես քացի տալ ինձ: Ապա թե վոչ վեր եմ կենալու ու մի լավ ծեծ կտամ քեզ:

Յես հասա Պոպլար-կոֆ և պտտեցի այնտեղ փոստի զբասնչակի և խանութի մոտերը, խոսակցության բռնվելով հասարակության հետ, վոր զալիս եր այնտեղ իր գործերով:

Մի մորուքավոր մարդ հայտնեց ինձ, վոր Սեմմիտը, ինչպես լսել ե, վրդովված ե ծեր Եբենեզեր Դորսետի վորդու անհայտացման առթիվ: Յերեվի ազան մոլորվել ե վորևե տեղ, կամ փախցրել են նրան: Ավել վոչինչ հարկավոր չեք իմանալ ինձ:

Մի քիչ ծխախոտ գնեցի, տեղեկացա, իբր թե պատահական կերպով, բակլայի գների մասին, նամակը կամացուկ արկղը զցեցի ու հեռացա: Փոստի կառավարիչն ասաց, վոր մի ժամից հետո փոստի սայլակը կանցնի և իր հետ կտանի Սեմմիտի փոստը:

Յերբ վերադարձա մեր քարայրը, վոչ Բիլլը, վոչ տղան չեյին յերեվում այնտեղ: Հետազոտեցի քարայրի շրջակայքը, սիրտ արի, մի յերկու անգամ ձայն տվեցի, բայց վոչ մի պատասխան չստացա:

Ծխամորճս կպցրի, քարի վրա նստեցի և սպասում եյի դեպքերին:

Մի կես ժամ անցած, թփերի մեջ շխշտոց լսվեց, և կաղալով, քարայրի մոտ մաքուր հարթի վրա դուրս յեկավ Բիլլը: Նրա հետևից յերեկաց տղան: Նա քայլում եր հետախուշոյի զգուշ և դանդաղ քայլվածքով: Դեմքի վրա լայն տարածված ժպիտն եր խաղուծ: Բիլլը կանգ առավ, գլխարկը հանեց ու կարմիր թաշկինակով մաքրեց իր դեմքը: Տղան ութ քայլ հեռավորութեան վրա թագնվեց նրա հետևից:

— Սեմ,—ասաց Բիլլը,—դու ինձ դավաճան կհամարես, բայց չես ավել դիմանալ չկարողացա: Յես չափահաս մարդ եմ, տղամարդու հակումներով և ինքնաողաշտպանութեան սովորութիւնով, բայց լինում են դեպքեր, յերբ ամեն ինչ խորտակվում ե: Տղան գնաց: Յես նրան տուն ուղարկեցի: Վիժեց: Հին ժամանակները նահատակներ եյին լինում, վոր գերազասում եյին մահանալ խարույկի վրա, քան հրաժարվել վորեւե հատուկ կոմբինացիայից, վորը պիտի հաջողեցնէր իրենց գործը: Վոչ մեկը նրանցից չի տեսել աչն գերբնական տանջանքները, վոր ստիպված եմ յեղել տանել յես: Յես աշխատում եչի հավատարիմ մնալ մեր պայմանին, բայց ամեն ինչ իր սահմանն ունի...

— Ի՞նչ ե յեղել, Բիլլ,—հարցրի յես:

Նա ինձ հեծած անցավ իննսուն միլ, ուղիղ մինչև գումակը և մի մատնաչափ անդամ շուգեց գիջել: Իսկ հետո, յերբ նորաբնակները փրկված եյին, ինձ վարսակ տվեցին: Վարսակի տեղ ավագ—զգվելի բան եր: Այնուհետև մի ամբողջ ժամ յես պիտի բացատրէյի նրան, թե ինչու շուրը թաց ե, իսկ խոտը կանաչ, և ուր ե գնում հողը, յերբ նրա մեջ ծակ ես գոյացնում: Յես քեզ ասում եմ, Սեմ, վոր մարդը միայն մարդ ե: Ոձիքից բռնեցի նրան ու սարից ցած գլորեցի: Ամբողջ ճանապարհը նա խթա-

նում եր: Յերկու վոաքերս մինչև ծնկները կապած են: Յերկու թե յերեք անգամ ձեռքս կծեց: Բայց, փառք ատործո, գնաց—տուն գնաց: Յես ցույց տվի նրան Սեմմիտ տանող ճանապարհը և աչնպես տվի ծոծրակին, վոր միանգամից ութ վոտնաչափ առաջ անցավ դեպի Սեմմիտ: Ափսոս, իհարկե, վոր մենք փրկագնից զրկվեցինք: Բայց ինչ պիտի անեյի: Ելի մի կես ժամ, և ինձ ստիպված կլինելին դժանոց տանել:

Բիւլը հառաչում ու հեվում եր, բայց նրա վարդագույն դեմքի վրա խաղաղության և հանգստության արտահայտութուն եր իջել:

— Բիւլ,—հարցրի յես,—քո ընտանիքում սրտի պալթյունից վոչ վոք չի մահացել:

— Վոչ,—ասաց Բիւլը,—մեր ընտանիքում վոչ մի ժառանգական բան չի յեղել, բացի մալարիալից և դժբախտ դեպքերից:

— Այդ դեպքում կարող ես հետ նայել և տեսնել, թե ինչ ե քո մեջքի հետևը:

Բիւլը հետ նայեց, տեսավ տղային, գունատվեց և գետնին ծունր իջնելով, սկսեց, հայտնի չե թե ինչի համար, խոտ պոկել և տաշեղ հավաքել: Մի ամբողջ ժամ անհանգստացնում եր ինձ նրա մտավոր ընդունակութունների վիճակը: Յես բացատրեցի նրան, վոր յեթե ձեր Գորսեար համաձայնի մեր պայմանին, մինչև կես գիշերին ամեն ինչ կվերջանա և մենք կազատվենք տղայից: Բիւլը մի կերպ հավաքեց իր ուժերը: Նրան հաջողվեց նույնիսկ խղճուկ ժպիտի նմանող մի արտահայտություն տալ իր դեմքին, և խոստացավ տղային, յերբ մի փոքր ուշքի գա, ուսու-ճապանական պատերազմ խաղալ նրա հետ:

Փրկագին ստանալու իմ ծրագրերը, վոր ապահովում եր մեզ ամեն տեսակ չար դիտալորությունից, արժանի լեր պրոֆեսիոնալ մանկագողներին: Այն ծառը, վորի տակ

պիտ դրվեր պատասխանը և այնուհետև ել դրամը, գըն-
նըվում եր ցանկապատի մոտ, իսկ շուրջը հարթ, մաքուր
դաշտեր ելին տարածվում: Յեթե մի խումբ վոստիկաններ
հետեվելին մարդուն, վոր պիտի գար պատասխանն ստա-
նալու համար, հեռվից կնկատելին, ինչպես նա մոտենում
է, ինչպես գնում է դաշտով կամ ճանապարհով: Ինչպես
չէ: Ութ և կեսին չես արդեն նստած ելի նշանակված
ծառի վրա, թագնված ճյուղերի մեջ, ինչպես մի ծառի
դողոշ, և սպասում ելի Դորսետի կողմից ուղարկված մար-
դուն:

Ճիշտ նշանակված ժամին հեծանիվով մոտենում է
մի պատանի. ցանկապատի սուռնի մոտ գտնում է կար-
դոնե տուվը, մեջը մի գրություն է դնում և հետ վազում
Սեմմիտ:

Ելի մի ժամ սպասեցի և վորոշեցի, վոր վոչ մի խարդա-
խուլթյուն չկա, ծառից ցած սողացի, վերցրի գրությունը,
ցանկապատի մոտով ծածուկ անցա դեպի անտառը: Կես
ժամից հետո մեր քարայրում ելի գտնվում: Բաց արի
գրությունն ու լապտերի լույսի տակ կարգացի այն հիլին:
Գրությունը դրչով խզրզած վատ ձեռագիր էր, հետևյալ
բովանդակությամբ:

«Գլխից ձեռք վերցրած յերկու մտդուն

Ջենտլմեններ, ստացա սուլն թվի ձեր նամակը,
վոր վերաբերում է իմ վորդուս վերադարձնելու
համար ձեր կողմից պահանջած փրկագնի հարցին:
Յես գտնում եմ, վոր ձեր պահանջը վորոշ չափով չա-
փագանցրած է, ըստ վորում հակաառաջարկ եմ ա-
նում ձեզ, վորը, նախորոք կարծում եմ, ձեր կողմից
ընդունված կլինի: Վերադարձրեք ինձ Ջոննիին և
վճարեցեք ինքներդ ինձ կանխիկ դրամով 250 դոլլար:
Այս պայմանով յես համաձայն եմ ձեզնից ընդու-
նել նրան: Ամենից լավ է գաք նրա հետ գիշերը,

վորովհետև հարեւմանները կարծում են, թե նա մոլորվել է, և յես չեմ կարող պատասխանատուություն վերցնել ինձ վրա, թե ինչպես են նրանք իրենց պահելու այն մարդկանց հանդեպ, վորոնք հետ կրեւեն վորդուս:

Կատարյալ հարգանքներով
Երեմեակեր Դորսեք:

— Մեծ ծովահեններ և Ֆլիբուստներնեք*), — բացականչեցի յես: — Այսպիսի հանդգնություն...

Սակայն նայեցի Բիլլին և տատանվեցի: Նրա դեմքն այնպիսի աղերսանք եր արտաճայտում, վորից ավելի արտահայտիչը յես չեմ տեսել վոչ մի խոսող կամ անխոս կենդանու դեմքին:

— Սեմ, — ասաց նա: Ի՞նչ բան է վերջի վերջո յերկու հարյուր հիսուն գոլլարը: Իրամ մենք ունենք: Մի գիշեր յեվս անց կացնեմ այս տղայի հետ և յես պատրաստ կլինեմ Բեղլամի**): համար: Յես գտնում եմ, վոր միտտեր Դորսետը, բայի նրանից վոր ջենտլմեն է, նա և շալլող է: Այսպիսի համեստ գումար պահանջել: Միթե դու բաց ես թողնելու այսպիսի եժան դեպք, Սեմ:


— Ճիշտ ասեմքեզ, Բիլլ, — ասացի, — այս վորքիկ գառը իմ շղերիս վրա ել է ազդում: Տաննք նրան իրենց տուն, փրկազին վճարենք և ազատվենք:

Նույն գիշերը տղային տուն վերադարձրինք: Մենք հավատացրինք նրան, թե հայրն արծաթե ծրատով հրացան և մոկասիններ***) է գնել նրա համար և վոր վաղը նրա հետ առջավորսի յենք գնալու: Այդ խոստումից հետո միայն հաջողվեց համոզել նրան, վոր մեզ հետ գնա:

*) Ֆլիբուստներնեք — XV Ա դարու ծովահեններ:

**) Բեղլամ — խելագորկների տուն Լոնդոնում:

***) Մոկասիններ յիջերվի կաշվից պատրաստած փափուկ կոշիկներ, վոր հագնում են շյուսիսային Ամերիկայի հնդկացիները:



Տղան աղբուկի նման կպավ Բիլլի վոտքերից:

ժամը ուղիղ տասներկուսն էր, յերբ Եբենեզեր Գորսետի դուռը բաղխեցինք:

Հենց այն մոմենտին, յերբ յես մեր առաջվա յենթադրության համաձայն տուփից մեկ ու կես հազար դուլար պիտի հանեյի, Բիլլը ծերուկի մեկնած ձեռքի մեջ համարում էր յերկուհարյուր հիսուն դուլար:

Յերբ տղան տեսավ, վոր մենք հեռանում ենք և նրան թողնում ենք տանը, նա բարձրաձայն, ինչպես մի նավի շահի, լաց յեղավ և տղրուկի նման կպավ Բիլլի վտտքից: Հայրը ստիպված էր խեժի սպեղանու նման մասմաս պոկել նրան Բիլլի վտտքից:

— Վորքան ժամանակ կկարողանաք սլահել նրան,— հարցրեց Բիլլը:

— Ե՛հ, այժմ յես առաջվա պես ուժեղ չեմ,— պատասխանեց ծեր Դորսետը:— Սակայն, կարծում եմ, տաս րոպե կարող եմ ապահովել ձեզ:

— Այդքանը բավական է,— ասաց Բիլլը: Տաս րոպեյում յես կկտրեմ Արևմուտքի նահանգների կենտրոնական հարավային և միջին մասերը և կանցնեմ Կանադայի սահմանը:

Յեվ չնայած գիշերվա մթությանը, Բիլլի հաստությանը և իմ արագավազ վոտներին, Բիլլը Սեմմիտից մեկ ու կես միլ տարածութուն էր անցել արդեն, յերբ յես հասա նրան:



Գառ. խմբագիրը՝ Հր. Քոչար
Տեխ. խմբագիրը՝ Ան. Գասոյարյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան

Դրավիտի լիպոյր Ղ-4723. Հրատ. 4529.

Գատվեր 203. Տիրած 6000.

Թուղթ 62×73. Տպագր. $1\frac{2}{3}$ մամ.

Մեկ մամ. 24480 նշան. Հեղինակ 0,96 մամ.

Հանձնված և արտադրության 26 փետրվարի 1938

Ստորագրված և տպագրության համար 25 մայիսի 1938

1882

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003077

36

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

084.

ЦЕНА

Տ
0/23754

Прол. 1940г.

О. ГЕНРИ
ВОЖДЬ КРАСНОКОЖИХ
ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН